

Թէոզոքրէա ալ խաչը գանուած տեղւոյ մասին տարբերակ մը ունի և կ'ըսէ թէ «խաչը գտնուած է տիրոջ գերեզմանին մօտ: Իսկ Գրիգոր Տուրացին խաչի գիւտի մասին կը գրէ այնպիսի մանրամասնութիւններ՝ զոր չունին ուրիշները:

Օքսֆորտի Ս. Ստեփանոս դպրոցի նախորդ մեծաւոր Argles՝ որուն յօգուածէն քաղեցինք մեր վերոգրեալ համառօտ տողերը, մէկ խօսքով, կանխադոյն հեղինակներու վկայութեանց վրայ յենլով հաւանական չի գտներ որ Հեղինէ մասն ունեցած ըլլայ խաչի գիւտին մէջ:

Ստոյգ է թէ Հեղինէի Երուսաղէմ այցելութեան առթիւ չափազանցուած պատմութիւններ շինուած են և անոր նկատմամբ ստեղծուած զրոյցները դարէ դար զարգացում գտած են, և նոյն իսկ պատմիչ մը՝ Նիկոփորոս իր Եկեղեցական Պատմութեան մէջ (Գիրք է, 30) Հեղինէի կ'ընծայէ բազմաթիւ եկեղեցիներու հիմնարկութիւնը, թէ՛ Երուսաղէմի և թէ՛ Գալիլիոյ մէջ, ինչ որ պատմականօրէն ստոյգ չէ, վասն զի Հեղինէ ութսունամեայ կի՛ն մը շատ քիչ մնացած է Երուսաղէմի մէջ և իր վերադարձէն քիչ յետոյ վախճանած է: Կիւրեղ Երուսաղէմացին իր Կոչումն Ընծայութեան գիրքին մէջ թէև կը յիշատակէ խաչին ներկայութիւնը ու անոր մասանց աշխարհի ամէն կողմն ցրուումը, բայց չիտակ է թէ չի յիշատակեր Հեղինէի միջոցաւ խաչին գիւտը, նոյնա

դէպք մը որ կապակցութիւն ունի Գիւտ խաչին հետ, «Յայտնիկ աւուրք հաւատաց Պատրոնիկէ կի՛նն Կղօղեայ՝ բանիւ սուրբ առաքելոյն Պետրոսի, և մեծաւ յուսով գնաց ի Հռովմէ յԵրուսաղէմ, ուստերօք և դըստերօք: Եւ խնդրէ մասն ինչ յառաքելոցն ի կեցուցիչ խաչէն, եւ առեալ գնաց ի Հռովմ: Եւ ըստ պայագատութեան քրիստոնէութեանն ժառանգեն Ղափարիմէ եւ Գայիանէ, որք էին յազգէ Պատրոնիկեայ երկրքին»: Խորհնացին Ղափարիմեանց հանապարհորդութեան հառին մէջ կը վկայէ այսպէս. « . . . խաչ զս. Յակոբայ՝ զմածեայն տէրունական արեամբն, ի կենաց փայտէն հատեալ վասն խնդրոյն Պատրոնիկեայ տիրոջ»: Այս աւանդութեան իբր հնագոյն վկայութիւն Ս. Սահակի անուամբ հին տօնացոյցին մէջ կը գրուի («Ժ. Մարերի, 17 Մայիսի) Գիւտ խաչին, յԱրգարու թուղթն զՊատրոնիկէն գիւտ և ընթերցիր»: Չեռագիր ճառընտիրներու մէջ առանձին գրուած է Պատրոնիկէի խաչին գիւտը հետեւեալ խորագրով. «Սրբոյ առաքելոյն Թագեոսի պատմութիւն յաղագս առաջին գիւտի սուրբ խաչին, որ յաւուրօ Յակովբոս առաքելոյն, ի ձեռնըն թագուհւոյն Պատրոնիկեայ, որ էր կին Կղաղեայ կայսեր Հռովմայ»: (տե՛ս Լաբուբնեայ, էջ 11-12)